Պարույր Սևակ

Գարնան հրահմամբ

Երեկ՝ դեռ խոնարհ,
Երեկ՝ դեռ հլու,
Իմ սիրտը այսօր
Խաղա՛ղ - անարյո՛ւն ապըստամբության դրոշ է պարզել
Իշխանության դեմ ա՛յն բռնակալի,
Որ կոչվում է Խելք
Ու կոչվում Գլուխ:
Արյուն չի՛ թափվի.
Զորքեր մի՛ բերեք:
Արյուն չի՛ թափվի:
Բայց արյան եռքից
Երակ-զարկերակ
Խփում են արագ.
Ապըստամբության թմբուկ են զարկում:
Արյուն չի՛ թափվի:
Դրա փոխարեն՝
Արյուն է թափում ծաղկած նռնենին,
Արյուն են հագել կին ու աղջիկներ,
Արյուն է հոսում երկնակամարով՝
Արյուն արևի՛.
Որ լերդանալիս դառնում է վառ ամպ:

Եվ ի՞նչ է ուզում սիրտը ապըստամբ:
Թե չեք հասկանում՝
Դուրս եկեք փողո՛ց,
Դուրս եկեք փողո՛ց,
Ուր, տեսե՛ք, մարդիկ
Լքել են հիմա իրենց տաք մորթին
Ու հագել մի բան,
Որ հին մի բառով - անշուշտ՝ անհաջող-
Մետաքս է կոչվում,
Իսկ նոր մի բառով - նույնքա՛ն անհաջող՝
Նեյլոն ու կապրոն:
Անցնում են, տեսե՛ք, կեցվածքներ պես-պես,
Ձևեր բյուրբազում,
Բոլորը՝ մսից - տա՛ք ու մարդկայի՛ն,
Կրծքերի ներքո ո՛չ թե պաղ մարմար,
Այլ մսի կտոր,
Որ կոչվում է սի՛րտ,
Եվ ամե՛ն սրտում՝
Խաղա՛ղ - անարյո՛ւն խռովություն է...
Կանանց աչքերում,
Տեսե՛ք,
Փլվել է ինքը երկինքը
Ու ծիծաղում է...
Շքահանդես է սարքել արբունքը-
Պատանիների շուրթերի վրա՝
Բեղերի շարքով,
Կորությունններով նորատիների,
Որ դեռ չեն զգում սուրբ կոչումն իրենց...
Մայիսյան արփին,
Տեսե՛ք,

Բազմահարկ շենքերի վրա
Իր նկարչության դասերն է տալիս,
Մի նկարչությո՛ւն,
Որ ձանձրացել է իրապաշտներից...
Քամին ձևեր է քանդում ու կերտում,
Ասես թե Լուվրի կամ Էրմիտաժի
Հազարէջանոց ալբոմ է թերթում,
Թերթածը կարգին չհասկանալով՝
Երեխայի՛ պես...
Ես երեխա չե՞մ.
Լա՛վ եմ հասկանում:
Լա՛վ եմ հասկանում,
Եվ այդ պատճառով սիրտը ուզում է
Ապըստամբության դրոշը ներկել
Արևի՛ հրում,
Ժպիտների՛ մեջ,
Երանգների՛ մեջ ցոլուն աչքերի,
Կանանց հանդերձի գույներո՛վ զառ-վառ,
Դեռատիների շիկնանքո՛վ խոսուն...
Սիրտը պարզել է
Ի՞նքս էլ չգիտեմ, թե ինչի՞ դրոշ...

02.III.1959թ.
Մոսկվա